

ԵՐԵՎԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տէլ է ֆ օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլ է ֆ օ ն № 253.

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԵՐԵՎԱՆԻ

Ընտրելիներէ մասին.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Անդրկասպեան երկրից. Նամակ Օշականից. Նամակ Ալեքսանդրովից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Իտալիայից.— ՀԵՌԱՆԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք դարձրինք մեր գիւղական ընտրողներէ ուշադրութիւնը իրանց պաշտօնականներէ, այն է, տանուտէրերի, դատաւորների, երէցփոխներէ, և ուրիշ գործավարներէ ընտրութեան վրա: Մենք հրաւիրեցինք ընտրողներին լրջութեամբ վերաբերվել դէպի ընտրութեան գործը և ընտրելիներէ ցուցակ կազմելու ժամանակ ղեկավարվել ոչ իրանց մասնաւոր հաշիւներով, ոչ խնամէական դիտումներով, այլ բարեխղճ և ազնիւ գործավարներ ունենալու հաստատ ձգտումով:

Այն թղթակցութիւններէ, որ մենք ստանում ենք, նկատվում է, որ մեր գաւառում մի քանի տեղերում, արդարեւ, սկսել են աւելի գիտակցական վերաբերմունք ցոյց տալ դէպի ընտրողական գործը: Բայց մեծամասնութիւնը դեռ շարունակում է առաջվայ պէս անհոգ լինել, կամ թէ ենթարկվել տեղական ուժերին: Օրինակ վաշխաուռի, հարստահարողի ազդեցութեան և ընտրել պաշտօնականներ առանց սեփական կարծիքի, առանց քննելու ընտրելիների արժանիքները:

Մենք լաւ գիտենք, որ բոլորով տարբեր դեռ շատ թույլ է գիւղում և նա իր բոլորի համար չարաչար կարող է պատժվել գիւղի ուժեղներից, բայց մենք գիտենք և այն, որ գիւղական հարստահարողները առաջվայ պէս ազատ չեն կարողանում գործել, որ նրանք սկսել են քաշվել հրապարակական քննադատութիւնից և որ գիւղական համայնքի մէջ աւելանում է այն տարրերի թիւը, որոնք պահանջ են գրում աւելի մաքուր և ազնիւ հասարակական գործունէութեան:

Գիւղական ընտրելիների խնդիրը շատ մեծ խնդիր է: Մենք ունենք հազարաւոր գիւղեր և ուրեմն հազարաւոր պաշտօնավարներ: Եթէ գիւղական գործողները լինէին կարգի և եւանդուն անձինք, որքան գործ կարելի կը լինէր կատարել գիւղում և նպաստել նրա տնտեսական և մտաւոր վիճակի բարելոման:

Մենք առիթ կունենանք դարձնել խօսելու այդ խնդրի մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻՑ

Կուշկա, սեպտեմբերի 1-ին
Կուշկան՝ ոռոգաց միակ բերքն է ամբողջ Միջին-Ասիայում և գտնվում է Ալեքսանդրովի մասնակցի հինգ վերստ հեռավորութեան վրա: Բերքը շրջապատված է շատ բլուրներով, իսկ հիւսիսային և հարաւային կողմից բարձրաւում են երկու զուգահեռական լեռնաշղթաներ, բաժանվում են միմեանցից մի ձորակով, որտեղով հոսում է «Կուշկա» գետակը: Բնութիւնը աղքատ է, երկիրը աւազոտ: Չը նայած, որ տեղը լեռնային է և բաւական ջուր կայ, բայց մի քանի անպտղատու ծառերից, ոչինչ չը կայ:

Բերքի բոլոր շինութիւնները պետական են, բացի մի քանի խանութներից, որոնք ժամանակաւոր պատկանում են վաճառական հայերին: Բերքից դուրս, 4 վերստ հեռավորութեան վրա, արեւելեան և արեւմտեան կողմում, բնակեցրված են ոռոգողականների խմբակով և Պոլտավայի նահանգներից, որոնք պարագլու են անասնապահութեամբ, իսկ նրանցից հեռու տարածված են թուրքմենները:

և աղանձների շատ գիւղեր: Տեղիս բնակիչների մեծամասնութիւնը կազմում են հայերը, որոնց մեծ մասը արհեստավորներ են, իսկ փոքր մասը՝ վաճառականութեամբ և կապալառութեամբ են պարագլու:

Կուշկայում սարսափելի տարածված է «ճահ-ճալիս վերս» (malaria) հիւանդութիւնը, մեծ մասամբ գործի մէջ: Այդ հիւանդութիւնից մեծագույնը անթիւ են և բացի զբաղից մի անգամ հիւանդացողը համարեա այլ ևս չէ ազատվում այդ հիւանդութիւնից: Այժմ էլ տեղիս բնակիչներին սպառնում է խօլերան:

Չը նայած երկրիս կառավարչապետի գործը լիք է խիստ միջոցներին՝ փոքր առ փոքր տարածվում է Անդրկասպեան երկրում: Ինչպէս ամեն տեղ պատրաստութիւն են տեսնում առաջն առնելու, այստեղ էլ նոյնպէս խիստ միջոցներ են ձեռք առնված խօլերայի դէմ, մասնաւորապէս որ այստեղ վտանգը սպառնում է երկու կողմից. մէկը—Միւրից, միւսը Հեւրաթից, Ալաշիրտանից, որտեղ արդէն խօլերան կոտորած է առնում:

Տեղիս կոմսիգանտի հրամանով արգելված է վաճառել զանազան միջոցներ և մրգեր: Սահմանը խիստ հակողութեան տակ է: Մտադիր են բերքի բոլոր դռները կողպել և կողմնակի մարդկանց մուտքը արգելել:

Մինչև այսօր խօլերայի մի դէպք անգամ չէ եղել:

Տ. Միլիք-Յիւսէփեանց

ՆԱՄԱԿ ՕՇԱԿԱՆԻՑ

Օգոստոսի 25-ին

Շուտով կը լինի Օշականի համայնքի գոյության ընտրութիւնը:
Այդ համայնքը բաղկացած է 9 գիւղերի հասարակութիւնից, որոնք են՝ Օշական 272 տուն, Դղլիմաուր 156 տ., Արաւատուն 102 տ., Ֆրանկաւանոց 93 տ., Դոյս 88 տ., Բաթրինյ 75 տ., Այաուր 44 տ., Հաշիդարա 36 տ. և Հարաւուր 9 տուն:

Ուրեմն մենք, այդ գիւղերի հասարակութեան ծայրատու անդամներ, պիտի ընտրենք մի մարդ, որ այդ անգին հասարակութեան կարիքները ու ցանքի հոգատարն ու դարձմանով պիտի լինի, որ պիտի սրտացաւ հօր նման փայփայէ ու խնամէ իր զանազան ազգութիւններից բաղկացած գաւառներին, որ օրինակ պիտի լինի իր պարտաճանաչութեամբ և անձնուէր գործունէութեամբ...

Շատ անգամ ենք հաւաքվել, շատ անգամ ենք ձայն տուել և ընտրել. բայց մեծ... նրանց, որոնցից դուրս էր գիւղը, որոնցից սարսափում էինք մենք... ընտրել ենք հարստահարողին, վաշխաուռին, գիւղի ուժեղներին, որ մի կեպալ ազատվեին... Բայց երկար փորձը մեզ ցոյց տուցւոյ մեր սխալը: Ընդհակառակը նրանք կրկնապատկեցին իրանց ոյժերը և կեղեքեցին մեզ մինչև օրս. հիւսմ մենք էլ չենք կարող անտարբեր աչքով նայել այդ մեծ սխալին, քանի որ մենք արդէն զարթնել ենք դարձուր ընդիմ: Բայց որ գիտակցութեան շնորհիւ կարողանում ենք ճանաչել անխիղճ մարդկանց զիմանելը, կարողացել ենք ցոյց տալ նրանց խելական պատկերը...

Եկէք, ուրեմն, այս անգամ փորձենք ընտրելու ժողովրդի դարդին մօտիկ մարդկանց, ընտրենք նրանց, որոնց սիրտը բարեխղճ է հասարակութեանը օգտակար լինելու ազնիւ ցանկութեամբ:

Ա. Դարիւր

ՆԱՄԱԿ ԱԼԵՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Օգոստոսի 31-ին

Մարտ և ապրիլ ամիսներն անցան. անընդհատ անձրևներ թոյլ չէին տալիս գիւղացուն վաղօրօք վերջացնել ցանքսերը: Շնորհիւ այդ հանդամանքի, յետագայ ամիսները հով անցան և հունձը սովորականից 2—3 շաբաթ ուշահասն: Յունիս ամիսը կարկուտներ էր: Կարկուտը մի քանի գիւղերի մեծ վնասներ տուցւոյ,

մասնաւոր փոքր Բախանակ գիւղին: Գիւղացիք հետեւեալ օրը թաղաք բերին մի խորշին կարկուտով լցրած, որոնք աղանու ձուլից մեծ էին: Բայց և այնպէս կարկուտի տուած վնասը անուղղելի չէր, յուլիս և օգոստոս ամիսների անձրևները նորից բուսցրին արտերը:

Պէտք է կարծել, որ շարունակ տեղացող անձրևների շնորհիւ հունձը գերազանց կը լինէր. բայց, իրօք, արդիւնքը դուրս եկաւ միշտ լիցի էլ պակաս: Մի կողմից անձրևը, միւս կողմից եղանակի հովութիւնը խեղճացրին բոյսերին և արտերը կարճ մնային թէ՛ ցողունով և թէ՛ հասկերով, չը նայելով, որ ուշ ցանված արտերից մի մասի, գաւառի լեռնային մասում, բերքը գոհացուցիչ էր: Սարերի գիւղացիք անպայման դո՛ւր ևս մնային բերքից, եթէ բուսածը աջողվէր նրանց բարեւ:

Օգոստոս ամիսին, երբ դաշտում սկսել էին հնձել, անսպասելի կերպով սարերի արտերի մէջ մուկ յայտնվեց, որ գերանդու պէս արմատից կտրում էր ու կարտում, ծեծվածի պէս մանրացնում էր ցողունը: Միևնրի բազմութիւնը զարմանալի է. զարմանալի է և առաջացրած աւերածոյքը: Միևնրի ճանապարհը, գիւղացու ասելով, Կարսի կողմերիցն է, որովհետեւ այն կողմերում էլ արտերը վնասվել են միևնրից: Անցնելով արեւելեան Շիրակ, նրանք տարածվել են գաւառի հիւսիսային կողմը, սարերի մէջ, Օրթաբլիթայի և Ալիխանի գիւղերում, մօտ 30—40 գիւղերի տարածութեան վրա:

Միևնրի առաջացրած աւերածոյքի մասին թեթեւ գաղափար տալու համար բերեմ մի օրինակ: Գիւղացիք պատմում է, որ շաբաթ երեկոյ գնացի արտս տեսնելու: Արտը բուսել էր շատ լաւ ու խիտ, այնպէս որ մարդ կը հիւսնար: Կիրակին անցաւ, երկուշաբթի նորից գնացի արտը և տեսալ համարեա ողնչացած, միևնրի բոլորը կտրել էին, գեղեցիկ արտից կէսն էլ չէր մնացել: Կառավարութիւնը ինչ-որ հեղուկ բերքի տուեց արտերում ցանկու համար, բայց երեկ գիւղացիք գործածելու ձեռք չիմանալուց, չը կարողացան միևնրի աւերածոյքի առաջն առնել:

Եւ այսպէս, գիւղացու ասելով, տարին նախանջ էր. անձրևներն ու կարկուտը մի կողմից փչացրին, ինչ էլ որ բուսաւ, այն էլ միևնրի կերակուր դարձաւ:

Չը նայելով միևնրի տուած վնասներին, այնու ամենայնիւ հացի գինը չէ բարձրանում:

Փամբակի գիւղերում արտերն անվնաս են և, ինչպէս պատմում են, այն կողմերում այս տարի հունձը սովորականից լաւ է: Այդպէս է նաև Արաքսալիցի կողմերում: Հացահատիկների առանձին պահանջ չը կայ: Գիւղերում կապալառուներ կամ նրանց գործակալներ չեն երևում: Ցորենի ընթացիկ գինը 16 ռուբլի է, դարու սոմարը ծախվում է 7 ռ. կամ 7 ռ. 50 կոպէկ:

Ն. Բան. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 19-ին Բարձրագոյն հրամանով ս. էջմիածնի սինոդի անդամներ Մակար Եպիսկոպոս Բարխուդարեանը և Միխայիլ վարդապետ Տէր-Մկրտչեանը համաձայն իրանց խնդրի (տեղեւորութեան պատճառով) պաշտօնից արձակվել են և նշանակված են նոր անդամներ Յովհաննէս Եպիսկոպոս Շիրակեանին, Յուսիկ վարդապետ Զօհրաբեանը, Մատթէոս վարդապետ Մարտիրոսեանը և Բաբկէն վարդապետ Աղաւելեանը:

Բագուի լրագրիցները հաղորդում են, որ սեպտեմբերի 2 և 3-ին Բագուում խօլերայով նոր հիւանդացող չէ եղել: Մեռել է սեպտեմբերի 1-ին հիւանդացած թուրք աղջիկը, իսկ եղած ոռոգողական ապարիւնում է:

Երկրագործութեան միջնաշրջանի խնդիր են տուել, որ Կազանում, Մարիպոլում, Եկատե-

րինօսլաւում և ուրիշ քաղաքներում բաց անեն գիւղատնտեսական ինստիտուտներ: Այդ պատճառով վճարված է նոյեմբերին կազմել մի յատուկ յանձնաժողով, որը պէտք է ընտրէ այդ քաղաքներից մէկին իր կենտրոնացողը, ուր պէտք է հիմնվի մի հատ աղապիսի հիմնարկութիւն:

Երկրագործութեան միջնաշրջանի խնդիր է Բաթումի գաւառի Չակվա կայարանի մօտ հիմնել թէյի երկրորդ գործարան:

«P. C.» լրագրիցը հաղորդում է, որ հաղորդակցութեան ճանապարհների միջնաշրջանները որոշել է շինել Ռուսաստանում առաջին էլէկտրական երկաթուղին: Դրա համար իբր փորձատեղ ընտրված է Թիֆլիս-Կարս երկաթուղու մի տեղը—20 վերստ տարածութիւն, որ միշտ դէպի վեր է բարձրանում: Առ այժմ այդ փոքր տարածութեան վրա փորձի համար էլէկտրական երկաթուղի անցկացնելով, միջնաշրջանները ցանկանում է փորձնականապէս վճարել Կովկասեան լեռնաշղթայից էլէկտրական երկաթուղի անցկացնելու հարցը:

Բագուի թերթերը հաղորդում են, որ մի խումբ ոռոգողական ձեռնարկողներ, ինչպէս Պորտվիկաւում առաջնորդութեամբ, խնդիր են տուել, որ Շամախու գաւառի «Կարանդեար» սարի մի քանի հողաբաժիններն իրանց յանձնվեն, որպէս զի կարողանան որոշել և շահագործել ծծումբի հանքերը:

«Kraj» լրագրիցը հաղորդում է, որ մօտ ժամանակներս Պետական Պորտուգալ ընտելու է Պրիվիլեյան երկրի 10 նահանգների մէջ ղեկավարական բարձրագոյն մարմնի հարցը: Մտադրութիւն կայ հիմնել մի առանձին տեսակի նահանգական և գաւառական ղեկավարների խորհուրդներ: Նահանգականներն ամբողջովին պէտք է ենթակայ լինեն նահանգապետներին, իսկ գաւառականները՝ գաւառապետներին:

«Речь» լրագրին առաջ է բերում հետեւեալ թեւերը. Պետերբուրգի տէխնոլոգիական ինստիտուտը խնդիր են տուել 1,389 հոգի, ընդունվել են միայն 249-ը, մերժվել են 1,140 հոգի: Կանանց բարձրագոյն կուրսերի համար խնդրատուների թիւը եղել է 1,200, ընդունվել են 550, որոնցից 500-ը մեղաւ ստացածներ և 50-ը միայն առանց մեղալի: Մերժված են 650 հոգի: Քաղաքացիական ինժեներների ինստիտուտը խնդրատուներից են եղել 545 հոգի, ընդունվել են 101, մերժվել 444 հոգի: Լեռնային ինստիտուտը ցանկացել են մտնել 700 հոգի, բայց ընդունվել են 60 հոգի, մնացած 640-ը մերժվել են: Ահա թեւեր, որոնք շատ բան են արտայայտում:

Սեպտեմբերի 4-ին Հաւարարի Արաքսեանի նոր թատրոնում կայացաւ հայ և վրաց թատերաւէրների խմբի ներկայացումը: Ողբացին հայերէն լեզուով «Քանդած օջախ» Գ. Սուքիսի գիւղականի և վրացերէն լեզուով «Արկաղիայի ճաշը», հեղինակութիւն Դաւիթբեկովի: Չը նայած սիրողների մատաղ ոյժերին, ներկայացումը, բացառութեամբ մի քանի անձանց, լաւ էր: «Արկաղիայի ճաշը» բաւական ծիծաղաշարժ պիւն է: Թատրոնի զահլիճն էլ կարծես նախանձելով բեմի վրա բեք անողներին և պարողներին, ինքն էլ իր կողմից, իր անտեղի գոռում-գոչումներով մասնակցում էր բեմակաների վառ ջէֆին, որով միայն խաղաւորները մնացածներին, պիւնայի բոլանդակութեանը լուրջ հետեւելու: Պէտք է ասել, որ պ. Արաքսեանի թատրոնում յաճախող հասարակութեան մեծամասնութեան մէջ զգալի կերպով բացաւ կայում է կարգապահութիւնը: Այդտեղ ևս պակաս են լինում, թէ խաղաւորներին և թէ ներկայացման ժամանակը, զանազան վէճեր շփոթանքների հետ, հայեցողներ, և այլն: Ներկայացումը վերջացաւ ուշ, ժամը 11/2-ին: Դահլիճը լիքն էր հանդիսականներով:

4. սեպտեմբերին

ԵՏԵՐՐՈՒԹՅՈՒՆ Գլխավոր շտաբի հաղորդածը. օխաբքայի պատերազմական շտաբի հրամա-
նարը գլխավոր շտաբին հաղորդել է հետևեա-
լաբար՝ Օյանայի պաշտոնական զինուցումը
ռադիո կոնիսերինց յետոյ Լեաօեանը գլխաւե-
մամբին սաստիկ մեղանշում է ճշմարտու-
ման դէմ եապօնացիներին խլած ուղղա-
քնքներին և շարժական իրերի վերաբերու-
մաը: Իսկապէս մենք թողել ենք երկու հին,
ժաման համար անպէտք վազօններ, որ ծա-
ւա էին քնակութեան համար, մի քանի
բատոված, անպէտք վրամփուշատառքեր և
եւծ քանակութեամբ մուսուլման աշիգներ

միս կայ: 12 ձիեր ամեն օր նուրբում է բեր-
դապահ գործին: Երբ չը կայ ունեւորութիւն,
Պորտ-Արտուրի կիսանքը համարեա նոյնն է,
ինչպէս խաղաղ ժամանակ. եկեղեցական արա-
րողութիւններ կատարվում են, թէև տաճարը
փակւած է. օրը երկու անգամ նուազում է
մուգիկան: Ռուսները հաստատում են, որ մին-
չև այժմ հապոնացիները չեն գրաւել և ոչ մի
մարտկոց պաշտպանութեան ներքին զօծի վրա:
Ռաբակոնովի անունով անհայտ անձնակազմը շտկվել
են վերջին 18 համաժամարար հանդիստ օրերում
և կատարելապէս լաւ դրութեան մէջ են գը-
տնվում: Ռուսները համոզված են, որ Պորտ-
Արտուրը երբեք չի վերցնվի:
ՄՈՒԿԻՆԷՆ, 5 սեպտ. (Բէյլէր): Մօտ ժա-
մանակներում սպասում են կարեւոր դէպքերի:
Հաղորդում են, որ հապոնացիները շարժվում
են դէպի արևելք: Զօրքերը կազմակերպել են
Լեհաստանի կուրից յետոյ:

ՏՕԿԻՈ, 4 սեպտ. (Բէյլէր): Օյաման գեկու-
ցանում է, որ ուսանական ձիւնորների առա-
ջագահ պահանջներն ամեն օր խուզարկութիւն-
ներ են անում հարաւում: Ռուսները բռնած
տեղն սկսվում է Ենասայից 19 վերստ - հեռու:
Ռուսական հեծելազօրն սկսում է ձմեռային
մուկութիւնը գլխաւոր դրժում հազնել:

ՏՕԿԻՈ, 5 սեպտ. (Բէյլէր): Զորքերը կարգի
պահանջները կազմված զօրքերը վարժու-
թիւններ են անում հասարակ գիւնորների հը-
րամանատարութեան տակ, օֆիցէրների և
ուսուցիչ-օֆիցէրների պակասութեան պատճա-
ռով: Այն հապոնացիները, որ համարվում են
պահանջների բռնակում և ապրում են արտա-
սահմանում՝ կանչված են Ենասայի: Զորքերը
կարգի պահանջը կը տայ 60,000 հոգի, որոն-
ցից պէտք է կազմվեն կանոնաւոր նոր զօրքե-
րի երկու նոր դիվիզիա: Մօտ ժամանակներս
Պորտ-Արտուրի պաշարման բանակից երկու
գիվիզիա ուղարկվել են Լեհաստանի մօտ՝ Օյա-
մայի բանակի ուժեղացնելու համար:

ՏՕԿԻՈ, 5 սեպտ. (Բէյլէր): Մուկութիւնի մօտ
նշանակվում է զօրքը ճակատ ուսուց զօրքի
դէմ: Ենասայիցները սաստկապէս ունեւորում
են ուսուց զօրքերը՝ առաջ ուղարկելով հետե-
ւակ զօրքը: Ենասայիցները են, որ այդ լինելու
է պատանդավոր ամենակարգ ճակատամար-
տը: Օյաման պատրաստվում է կատարելու
գլխաւոր շարքից նրան արված հրահանգները,
որը հրամայել է յարձակվել Մուկութիւնի վրա և
փորձել առաջացնել մեծ չը շարժակիչ շարժում,
որպէս զի կտրվի ուսուց շահանջման դիմը:
Ենասայիցները առաջագահ պահանջները պատե-
րազմի են բռնվել գեներալ Միշկինովի զօրքի
հետ: Վերջինս յետ է նահանջել դէպի Մուկ-
ութիւն: Նրա կորուստը 100 վերստը է: Ենաս-
այիցները զօրքի ճակատը տարածվում է 25 մը-
դուն: Կորուկին ալ թիւի վրա է: Օկուբ զօրքը
կենտրոնում է և Նօգնուի ձախ թիւում: Կու-
րօկին դեռ ևս չէ կարող պատերազմ սկսել,
նրան է յանձնված չը շարժակիչ ուսուց ձախ
թիւը: Ընդհանուր դրութիւնը մօտաւորապէս
համաման է Լեհաստանի ճակատի սկզբի դրու-
թիւնը, միայն թէ Մուկութիւնի ամբողջութիւնը
այնպէս մշակված չեն ինչպէս Լեհաստանում:
Կուրօպատկիւն օգնութիւն է ստանում Ուար-
քիւնից: Այդ ցոյց է տալիս, որ նա մեծել է
յամառութեամբ պաշտպանել Մուկութիւնը:

ՏՕԿԻՈ, սեպտեմբերի 5-ին: (Բէյլէր): Օկուբ
տեղեկացնում է, որ Լեհաստանի մօտ գերի է
վերցրել 13 ուս և ձեռք է ձգել պաշարի հե-
տեւակ քանակութիւնը. 30 ձի, 2288 հրացան,
127 կառք զինամթերքով, 5892 ուս, 659,930
փամփուշտ և մեծ քանակութիւն փայտեղէն և
կառուցման նիւթերի, ալիւրի, բրնձի, խոտի,
գործիքների, շորի և պիտոյների: Կուրօկի
և Նօգնուի ձեռք գերիներ չեն բնկել: Կուր-
օկին խել է 40 ձի, սայլեր զինամթերքով, 80
հրացան, 300 ուս, 600,000 փամփուշտ, հե-
տադրական և զանազան ուրիշ գործիքներ:
Նօգնուի ձեռքն են բնկել 490 հրացան, 1164
ուս, 37,780 փամփուշտ, 3 արեւադիւ, հե-
տախօսներ, գործիքներ և մեծ քանակութիւն
փայտեղէն և կառուցման մթերքի: Օկուբ այս
մթերքից այնքան է խել, որ մտադիր է պա-
հետ բանար:

10-ի 0-ը, 6 սեպտ. (Բէյլէր): «Տայմի»
թղթակիցը հաղորդում է, որ Տօկիոյում պաշ-
տօնապէս յայտարարված, որ Կուրօկին Լե-
հաստան ձեռք ձգել 8 թիւանթի: Կուրօկին խը-
լել է 3000 ուս, և երկաթուղային մթերք, և
Նօգնուի առել է 378,800 փամփուշտ և 660
ուսներ:

Խմբագիր ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԴՍՈՒՆ
Հրատարակչին՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԼԱԿ ՄԵԼԻԲ-ԱՆՍՏԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՂԱԶԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ ներքին և երեխայից
հիւանդութեամբ. 9—11 ժ. առաւօտեան, 5—7
ժ. երեկոյեան: Բուխչիւկի 30, տէլեֆօն 847.
(Ե. հ. շ.) 1—5

Բ Ժ Ի Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
ԱԶԳԻ ՀԻԿԱՆԻՆԻՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Կեխմիսովսկայա փողոց № 8: (Ե. Կ.) 20—100

Ներսիսեան դպրոցի Ա. պատ-
նում (անգլագէտների դասարանում) մի քանի
ազատ տեղեր են մնացել: Ցանկացողները այս
ազատ տեղերի համար կարող են ինչդիր տալ
(ծննդեան և ծաղկի վկայականներով) մինչև
սեպտեմբերի 8-ը:
Պաշտօնակատար տեսչի
Ստ. Մալխասեանց
(2. Կ. Ե.) 3—3

ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
ԵՒ
Մանկական Պարտեզ
Ե. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ
(Մանգ. Յովհաննէսեան)
Բերութիւնայա փողոց, տուն Շաղիկեանի № 38.
Երկու սեռի մանուկների ընդունելութիւնը
օգոստոսի 20-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից.
(21, 22, 26, 28, 29, 1, 3, 6, 7, 9) 7—10

ՎԱՌՎԱՌԵ ԵՒ ՍՏԵՓԱՆ
ՍՄԲԱՏԵԱՆՑՆԵՐԻ
ուսումնարանում աւանդվում են՝ կրօն (հա-
յոց լեզուով), ուսուց լեզու, թուրքաւո-
թիւն, հայոց լեզու և գեղագրութիւն և տար-
վա ընթացքում պատրաստվում են ընտելեան
երեխաներ զանազան միջնակարգ դպրոցների
և Լազարեան ձեմարանի համար:
Ուսումնի սկսվում է օգոստոսի 10-ից: Բոս-
տով Դիվ, Տուրքաւոթիւկեան փողոց, տուն եղբ-
Ուսումնի, № 4. (ա. օ.) 23—25

Ընդունում են ձեռնառն պայմաններով
ԳԻՇԵՐՈՒԹԻԿ
աշակերտներ. Бедютовский пер. домъ Симо-
нича. (Կ. Կ. Ե.) 4—6

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
ՈՒՍՈՒՍՆԱՐԱՆ
Ա. Բ. Հ. Ե. Ս. Ա. Ն. Ո. Ց.
„ՓԵՐԱԿ“
Օր. Մ. ԲԱՆԼԵՍԻԱՆԻ
Ընդունվում են աշակերտներ 12 տարե-
կանից: Նոյնպէս և գիշերօթիկ: Պայմանների
մասին պէտք է իմանալ առաւօտեան ժամի
9-ից մինչև երեկոյեան 6-ը: АРХИВНИЙ пер.
№ 4 домъ Шлиттеръ. (2. Կ. Ե. Կ.) 3—10

Հ ա ռ կ ա լ ո թ է ց ե ն դ ա լ ո թ
ՏՆԱՅԻՆ ՎԱՐՈՒՆԻ
Գործի քաղաքում (Չանգեղուրի գաւառ), հա-
յերէն և ուսուցիչներ ընդունելու համար: Ռոճիկը՝
տարեկան 600—700 բուրլի և սենեակ: Դիմել
«Մշակի» խմբագրատուն: (2. Կ.) 2—2

Բնական գիտութիւնների ֆակուլտետը
աւարտած ՄԻ ՀԱՅ ՏԻԿԻՆ
կամենում է դասար ունենալ՝ առարկաներից և
գլխաւորապէս ֆրանսերէնից:
Դիմել ժամը 11—3-ը:
Вельяминовская, 19. (Կ. Կ. Ե.) 3—10

Ցայտարարում են ի գիտութիւն թարգմանիչ-
ների, որ բնա գրից թարգմանած և արդէն
պատրաստ ունեն.
ՊՈԼ ԷՐՎԻՆՈՒ «Հանդիս» դրաման 2 գործող.
ԱՆՐԻ ԲԵԿԻՆ «Ազատեան» կոմէդիան 4 գործ.
ՅԱՐԻՍ ԿԱՐՐԷՆ և ՊՈԼ ԲԻԼՈՒ «Հարս»
կոմէդիան 3 գործող.
ԻԱՍԷԼԻ ԼՈՒԻՉՈՒՆ «Արեւիկ Աւետարան»
դրամատիկական անցք մի գործող.
3—3 (Կ. Կ. Ե.) Տիգրան Զաւէն

Մրանով պատիւ ունեւ հաղորդելու թիֆլիսի
յարգելի հասարակութեանը, որ օգոստոսի
10-ից (ս. տ.) բացված է այստեղ շաղկերի
գործարանի պահեստ, որտեղ ծախվում են
գործարանի գին և բոլոր ամեն տեսակ գեղա-
նկար և նոր ճաշակի շաղկերներ և համա-
պատասխան պատկանելիքներ: Գները նշանակ-
ված են գործարանական 8 կօպ. մինչև 8 բուր-
լի ծախվում է թէ գումարով և թէ առանձին
սենեակների համար:
3—6 (Կ. Կ. Ե.) Յարգանք Զ. Ց. Աւագեան

Դ Պ Ր Ո Ց
ԿԵՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Երկու սեռի մանուկների համար: Ընդունելու-
թիւնը շարունակվում է: Բեհուլեան փող, սեփ.
տ. 29. 1—3

Թիֆլիսի Ժողովարան
Սեպտեմբերի 7-ից ամեն երեքշաբթի և շա-
բաթ օրերը ամարային շէնքում նշանակված
են ընտանեկան երկրորդներ, մանուկները համար
գիւնդարական երաժիշտների և սազանգարների:
7, 11, 14. 1—3

Մ ա մ ու լ ի տ ա կ է
Ա. ՉԵՆՈՎԻ
ՊԵՏՐՈՒՆԻՍԻՆԵՐ
Բովանդակութիւն.—Քնել եմ ցանկանում,
Գիւնդարներ, Գիւնդար, Ընտանիքի հայրը,
Թշնամիներ, Ապօրինի գաւակ, Աստուածայ-
րում, Անտանիկի մարդիկ, Սև արեւայ:
1—6 (Ե. հ. շ.) Թարգ. Գ. Արարաշեանի

Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՈՒՆԻՆԵՐ
յայտարարում է, որ համաձայն դուժայի այս
տարվա յուլիսի 28-ի որոշման, որ արդէն օ-
րինական ոյժ է ստացել, գնահատութեան
տուրքի չափն այս կիսամեակում աւելացրել է
1/10 1904 թ-ի յուլիսի 1-ից (հաշիւով ամ-
բող տարվա վճարի 1/80-ը). այդ աւելացրված
տուրքը պէտք է վճարվի, առանց տուգանքների
հաշիւու, ներկայ տարվա հոկտեմբեր ամսի
ընթացքում:

Պ. Ե. ԱԻՍԱԲԻՍՈՎԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄ-
ՆԱՐԿՈՒԹԻՆԵՐ Ծախում է պողպատե ծա-
ռեր՝ արտասահմանեան, ուսանական և կով-
կասեան տեսակների:
Հասցէ.—Станция Скра, Зап. ж. д. Авсар-
кизов.
Մանրաման ցուցակը և համառօտ գների
ցուցակը ուսուցիչներ և վարչերէն լեզուներով
ուղարկվում են ձրի (Կ.) 1—10

ՎԱՐՁՈՎ Ե ՏՐՎՈՒՄ
բնակարան, բաղկացած ութ սենեակից շրով-
վանայով, հայելու դահլիճով և ամեն տեսակ
յարմարութիւններով: Հասցէն՝ Վօդսենսկա-
յա № 6.

Ց. ԴԱՐԱՅԵԱՆԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ուսուցիչից հայերէն
Լոյս տեսաւ ՎԵՏԵՐՈՐԻ պրակը, գինը 1 ր.
ճանապարհածախով 1 ր. 20 կօպ.: Բառարանի
բաժանորդագիրը ճանապարհածախով 7 ր.
հօթներով (նախադիւրջին) պրակը լոյս կը
տեսնէ հոկտեմբերին, որից յետոյ բաժանոր-
դագիրը մի բուրլով կը բարձրանայ: 4 ր. ու-
ղարկողը համարվում է բաժանորդ և անմիջա-
պէս ստանում է լոյս տեսած պրակները:

Լ Ի Ա. Կ. Լ. Տ. Ա. Բ. Ա. Ռ. Ա. Ն.
Հայերէնից ուսուցիչ
Բաժանորդագիրը մինչև 1 պրակի լոյս տես-
նելը ճանապարհածախով 4 ր., իմ առաջին բա-
ռարանի բաժանորդների համար 3 ր. 50 կ.:
Գաւառները գինով ուղղակի հեղինակին
հետեւել պարը հասցէով. Тифлисть, А. С. Даг-
башинцы. Իսկ թիֆլիսում բաժանորդագրու-
թիւն ընդունում է ինքը հեղինակը Евангу-
ловская, № 12, Д. Артазова, П. этажь և
«Գոլտուէրերը» գրախանութիւն: (2. Կ. Ե.) 3—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԻԳ
գրավաճառանոցում վաճառվում են.
ամեն տեսակ հայերէն, ուսուցիչ, և ֆրան-
սերէն դասագրքեր, աղյուսներ, գլոբուսներ և
այլ դասական առարկաներ: Գումարով գնող-
ների բաւարար գեղջ է լինում: Պատուէրնե-
րը կատարվում են ամենայն ճշգրտութեամբ և
շուտափոյով: Վերադիր վճարով ցանկացողները
պէտք է ուղարկեն անպատճառ կանխավճար:
Դիմել՝ Книжный магазинъ "Гуттенберг"
(Дворцова), Г. Галустану. 4—4

ՄԱՂԿԻՈ-ԴԵ-ՎՈԼՈՆ
ԲՐՈՎԵՐ ԵՒ ԸՆԿ.
հնարածը, մրցութիւնից բարձր յատկութիւնով
Crant Prix
Պ ա ռ ի ղ ի 1900 թ լ ի ա մ ե ն ա ռ ա ճ ը գ ի ն ը:
5—1905—10 1—10

ԲԱԼԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Վօգախի փողոց, տուն Թիֆլիսի առեւտրական բանկի:
Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Մ Ե
1) Երկաթէ բարկաներ ամեն տեսակի և չափերի:
2) Տանիքի թիֆլիսի (КРОВЕЛЬНОЕ ЖЕЛЕЗО) Սիբիրայի և այլ գործարաններից:
3) Ցանկանում են ընդունելու արդէն վճարված են պատուէրներ
Մեծ քանակութեամբ գնողներին որոշ գինով և արվում Ընդունվում են պատուէրներ
Անդրկովկասեան երկաթուղու բոլոր գծերի վրա յանձնելու պայմանով:
Նօգնութիւնի Գիւնդիկի ցանկն առաջարկվում է վաճառող գնողներին Զարս բուրլի
վարսուն կօպիկ Թիֆլիսի կայարանում, իսկ ընդունելութեան պահանջից Զարս բուրլի
ստան կօպիկ:
(Ե. հ. շ.) 7—10

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
„ՍՏՈՒԿԵՆ ԵՒ ԸՆԿ.“
Բ Ա Գ Ո Ւ
Իր սեփական պահեստներում մշտապէս ունի
Երկաթ ամեն տեսակի և ձեւի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкован-
ное) երկաթանի երկաթէ գեղանի, շրտն մեքենաներ «Պամբան» և «Բուպլէք», ուսանական պողպատի խողովակներ
և գրանց գոգաւոր ժամեր, ֆիլիպիններ և այլն: Գործըր պահապան տեսակի (станки токарные, сверлильные,
строгальные и др.): Մամուլներ ծախող և ուրիշ տեսակներ: Պողպատ գլոբեր, կարգիներ և գործիքներ շինելու
համար: Մետաղայա փոփի, աղիւս անոթ (соединительный), «Գլիւրիլ» և կաւ, բնեւեր (заклепки котельные, пис-
тонные): Գամեր զանազան տեսակի, պատուական (болты) և գալիւսներ, պղինձ թիթեւոր և կտորներով, պղինձ
խողովակներ, թիւլե առաջատմ (асфальтированная) խողովակներ շրտնների համար և զանց գաղաւորող մետեր,
Անագ ձողաւոր, արձիւն թիթեւոր և կտորներով, ցինկ թիթեւոր և այլն: Պարագանե (арматура) սլինձեւ,
բոնիգեւալ և ձողաւոր: Գործիքներ զանազան տեսակի, բոտիւն առարկաներ, ցանկան. նմանապէս տեղեկութեան ամեն
տեսակի մետաղներ և իրք:

Ներկայացուցիչ է
ԲՈՒՍՏՈՆ ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.
Շողաներաներ
Կեռօսիւնայ } շարժիչ մեքենաներ
Նաւթայ }
Շողաներաներ (ЛОКОМОБИЛЫ)
Արդուկներ (катки для шоссе)
ԲԻՐԱՐԻ ՄԱՅԵՐ
Ներկեր զանազան տեսակի
Արձիւնայ ձեռնկող (БЕЛИЛА)
Արձիւնայ սուր (сурик)
Ընդունում է լիովին կատարելաւ տախտակի, բուրջ լուսնող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում
է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիկական պիտոյների վերաբերելու:
Իւրաքանչիւր հաղորդի պատասխանում է անմիջապէս:
Երեքները ցուցակները ուղարկվում են ձրիարաւ:

ԳԵՐՄԱՆ-ԱՌՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ
ՄԱՆԵՆՄԱՆԵԱՆ ԽՈՂԱՎԱԿՆԵՐԻ
Միակ ներկայացուցիչ
Բողովակներ առանց կարի, գաղաւ, նաւթանոցեր,
ծխնիւրի և ջրաղաղակներ: Նմանապէս և ամբողջաւ
խողովակներ խաղաղութիւնների համար (компрессоры):
Պայմը (МАЧТЫ) անկար խողովակներից, երեքաղա-
կան ուղիների լուսաւորութեան և այլ շինութեան հա-
մար սիւներ հետախօսական, հետազարական լարերի և
շանթագրիւնների համար:
Ներկայացուցիչ է նմանապէս «Գաւառի» Էմիլ Լիպ-
գալտ և ընկ.» և ուրիշ բնիկութիւնների ու հաստատու-
թիւնների: